ԴՎԻՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Պատմ. գիտ. դոկտոր Ա. Ա. ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ

Միջնադարյան Հայաստանի մայրաքաղաք Դվինը պատմության ասպարեզից դուրս եկավ XIII դարի 30—50-ական թթ., թաթար-մոնղոլների ավերիչ ասպատակություններից հետո։ Երբեմնի ծաղկուն և բարգավաճ քաղաքը այնպես ոչնչացվեց, որ մոռացության մատնվեց և պատահական չէ, որ XIV—XVII դդ. աղբյուրներում այլևս չի հիշատակվում։ Քաղաքի տարածքում առաջանում են մի շարք բնակավայրեր, որոնց անունները, ցավոք, մեզ հայտնի չեն։ Առաջին անգամ XVII դարի հեղինակ Զաքարիա Ագուլեցին իր օրագրությունում հիշատակում է երկու գյուղի անուն. «Ղենարեն մինչի Վեթու դետն՝ մին աղաջ։ Աստի մինչի Աղբուռնն՝ մին աղաջ։ Աստի մինչի Դվին՝ մին աղաջ, կամ Արդաշէր։ Աջ գնաս Դվին է, ձախ գնաս՝ Արդաշերայ, որ է Թոփրայ-ղալեն։ Դվինու մինչի Գառնու գետն՝ կես աղաջ...»[1]։ Զաքարիա Ագուլեցու տվյալներով ճանապարհը անցել է բլուրից արևելք՝ Նորաշեն (նախկին Քյուրդքենդ) գյուղի միջով։ Կարելի է ենթադրել, որ Դվինի տարածքի գյուղերի մի մասը, այդ թվում նաև Դվինը և Արդաշերը (ժամանակակից Վերին Արտաշատը) բնակեցված են եղել թվինցիներով, և հետագայում բնակչության թիվն աճել է XIX դարի 20—30-ական թթ. վերաբնակեցված պարսկահայերի հաշվին։ Այգեստան (նախկին Այսալու) և Վ. Արտաշատ հնում հայաբնակ գյուղերի տարածքից գտնված որոշ հնագիտական նյութեր և գերեզմանային կոթողներ XVI—XVII դդ. այս գյուղերի գոյության ապացույց են։

XVII դարի երկրորդ կեսից սկսած հայ հեղինակների ու եվրոպացի ճանապարհորդների երկերում երևան են գալիս Դվինի մնացորդների և նրա տարածքի գյուղերի նկարագրություններ[2]։ Այդ դիտարկումները մեծ հետաքրքրություն են ներկայացնում հատկապես քաղաքի տեղագրության վերաբերյալ վիճելի հարցերի պարզաբանման համար։ Սակայն պետք է նշել նաև եվրոպացի ճանապարհորդների կողմից ստեղծած տեղագրական շփոթությունը Արտաշատի և Դվինի տեղագրության հարցում, որը Կ. Ղաֆադարյանի կարծիքով առաջացել էր «նյութին լավ ծանոթ չլինելու և իրենց թուղթի տպավորությունների ու անստույգ տեղեկությունների հիման վրա եզրակացություններ հանելու հետևանքով»[3]։ Տեղագրական շփոթության պատճառ էր նաև Դվինի ավերակների մոտ գտնվող Արդաշար—Արտաշար—Արտաշիր գյուղի անունը, որն ինչ-որ չափով համահնչուն էր Արտաշատ անվան հետ։ Այս ամենը, սակայն, փոխհատուցվում է հուշարձանի նկարագրությամբ։

Անգլիացի դիվանագետ Ջեյմս Մորիերը 1814 թ. այցելելով Դվին, այն համեմատում է Ռեյի ավերակների հետ[4]։ «Գլխավոր ավերակներին շատ մոտ

---

1 *Զաքարիա Ագուլեցու օրագրությունը. Երևան, 1938, էջ 23—24։*

2 Les six voyages de Jean-Baptiste Tavernier en Turquie, en Perse et aux Indes. Première partie. Paris—Amsterdam, 1677; Путешествие кавалера Шардена по Закавказью в 1672—1673 гг., Тифлис, 1902; *Մ. Թադիոսյան. Ուղեգրություններ, հոդվածներ, նամակներ, վավերագրեր. Գրական ժառանգություն № 9, Երևան, 1975 և այլն։*

3 *Կ. Ղաֆադարյան. Դվին քաղաքը և նրա պեղումները. 1, Երևան, 1952, էջ 19։*

4 *Ռեյը միջնադարյան փոքրիկ բնակավայր է Պարսկաստանում՝ Թեհրանից ոչ հեռու, հայտնի է որպես հախճապակու արտադրության կենտրոն։*

զետեղված է Արտաշիր (Ardashir) անունով գյուղը, և շատ ուրիշ գյուղեր սփռված են նկատելի պարիսպներից ներս»[5]։

1834 թ. Դյուբուա դը Մոնպերեն, լինելով Դվինում, հանում է քաղաքատեղիի հատակագիծը, անվանելով այն Արտաշատի հատակագիծ[6]։

Անգլիացի հնագետ Ռոբերտ Կեր-Պորտերը 1817 թ. այցելել է Դվին, նկարագրել է ավերակները և հանել քաղաքի ու միջնաբերդի ընդհանուր հատակագիծը, որը հետագայում հրատարակում է նաև Ղ. Ալիշանը[7]։ Կեր-Պորտերի կողմից ավերակների նկարագրությունը շատ ստույգ է և բավարար փաստագրական նյութ է պարունակում։ Նա գրում է. «Հասնելով Արտաշիրի ավերակներին (ըստ երևույթին պետք է հասկանալ Դվինի— Ա. Ք.), տեսա, որ հողը ծածկել էր հսկա տարածություն և ամեն կողմ անկանոն բլրակներ կային, որոնք ժամանակի ընթացքում կազմվել էին ավերակների դեզերի վրա։ Սրանք և երկար խրամանման շարքերը զգացնել էին տալիս, թե ես գտնվում էի մի քաղաքում, որ ոչ ևս է... այլևս չկային ո՛չ կոթող, ո՛չ գմբեթ և ո՛չ էլ որևէ բնակարանի պատ. ամեն ինչ խորտակված էր և ոչ մի բան չկար ներկայումս զգացնել տվող նրա գոյությունը, այստեղ ամեն ինչ վերջացել է և ծածկվել հողի թումբերի տակ.—շիրիմներ՝ ոչ միայն ժողովրդի, այլ նաև նրանց տների, տաճարների, պալատների, ամեն ինչ թաղված մահանման լռության մեջ։ Անիում ես գտա ինձ շրջապատված հսկայական մեծության գերագույն հուշարձաններով, Արտաշիրում՝ ես կանգնեցի նրա գերեզմանի վրա։ Այս գծից (պարիսպներից) ներս կային անթիվ բարձրություններ, որոնց շատերի մակերեսի վրա ես գտա ցան ու ցրիվ այրած աղյուսի կտորներ և կապույտ ու կանաչ կղմինդրի բեկորներ (խոսքը ջնարակած անոթների մասին է—Ա. Ք.)։ Զուր փնտրեցի որևէ տաշված մի քար կամ մի շենքի ակնհայտ հետք, կամ կանոնավոր ճարտարապետական կառուցվածքի շինություն... այս վայրերում կարելի է տեսնել հսկա հաստությամբ մեծ պարիսպների շատ մասերը։ Նրանք շինված են արևով չորացրած աղյուսով, որ նույնիսկ այնքան դարերից հետո տակավին տեսնվում են կանոնավոր շարված»[8]։

Անգլիացի զինվորական Ջոնսոնը Հնդկաստանից Անգլիա վերադառնալու ժամանակ անցել է Հայաստանով, նկատել է Դվինի ավերակները, որոնց մասին հայտնել է հետևյալը. «Տասնչորս մղոնում անցանք ընդարձակ ամրությունների մնացորդներից, զանազանելի միայն բլրակներով հավասար հեռավորությամբ և քարե պարիսպներով, որոնք տարածվում են ճանապարհի մեկ կողմից մյուսը։ Այս վայրը այժմ կոչվում է Թոփրա-Կալա (Topra Keella) և ոմանք կարծում են, թե հների Արտաշատն է, բայց ավելի ճիշտը համապատասխանում է Տիբիրումին (Tibirum), Դավալուից իր ունեցած հեռավորության հետևանքով»[9]։

1816 թ. Դվինում է եղել Մեսրոպ Թաղիադյանը. «Ընդ գետն (Գառնի— Ա. Ք.) ի վեր յարուցեալ՝ գտաք զաւերակս բերթապարիսպ հզօր քաղաքին, զորմէ հաստատէր Պօղոս վարդապետ, լինիլ մնացորդ նախնւոյն Դվինայ՝ Ոստանին հայոց»[10]։

Միմյանց հակասող և երբեմն լրացնող այս վկայությունները արժեքավոր են քաղաքի ուսումնասիրության համար։ Հատկապես քարտեզագրական նյութն իր մեջ պարունակում է տվյալներ, որոնք ներկայումս հաստատվում են հուշարձանի դիտարկումներով և մտորումների տեղիք են տալիս։

---

5 Հ. Հակոբյան. Ուղեգրություններ. հ. Զ, Երևան, 1934, էջ 315—316 (այսուհետև՝ Ուղեգրություններ)։

6 Voyage autour du Caucase par Fréderic Dubois de Montpéreux. III, Paris, 1890.

7 Ղ. Ալիշան. Այրարատ. Վենետիկ, 1890, էջ 399, 404։

8 Ուղեգրություններ, էջ 770—772։

9 Նույն տեղում, էջ 638։

10 Մ. Թաղիադյան. Նշվ. աշխ., էջ 95։

Կան հարցեր, որոնք հետաքրքիր են ամրոցաշինության, քաղաքաշինության իմաստով։ Դվինի երևան գալը, բացի քաղաքական և հասարակական-տնտեսական գործոններից, որոշակի կապված էր նաև տեղանքի աշխարհագրական տվյալների հետ, ինչն արտացոլվել է նրա քաղաքաշինական սկզբունքների մեջ։ Ուսումնասիրողները ճիշտ են նկատել, որ քաղաքը հենց սկզբից կառուցվել է եռամաս հատակագծման սկզբունքով (միջնաբերդ, քաղաքային մաս և արվարձաններ)[11], որն այնքան տարածված էր Հայաստանում և ընդհանրապես արևելյան քաղաքաշինության մեջ։

Եվրոպացի ճանապարհորդներն իրենց նկարագրություններում ըմբռնել են այս հանգամանքը, որն արտացոլվել է նաև նրանց ներկայացրած քարտեզներում։ Քաղաքի պաշտպանության համար շատ կարևոր են պարիսպների կառուցվածքային մանրամասները։ Դյուբուա դը Մոնպերեի և Կեր-Պորտերի քարտեզներում Դվինի քաղաքային պարիսպների արևելյան, հարավարևելյան և հյուսիսային հատվածները ներկայացված են կրկնակի շարքով և աշտարակներով։ Չի կարելի մտածել, թե երկու հեղինակներն էլ սխալվել են։ Այդ հատվածներից առաջինները անցնում են Վերին Արտաշատ գյուղով և դաշտերով հասնում մինչև Բերդիկ (նախկին Բզովան) գյուղի ծայրամասը։ Հյուսիսային հատվածը ձգվում է Հնարերդ (նախկին Թոփրաղ-Կալա) գյուղի հյուսիսային եզրով։ Ներկայումս այդ պարիսպները չկան, բացի միջնաբերդի արևելյան կողմից սկսվող փոքր հատվածից, սակայն հստակ նկատվում են կրկնակի դարավանդներ երբեմնի ջրային խրամատների վրա։

1937 թ. հետո հուշարձանի պարիսպների նկարագրությունը որոշակի չէ և չի կարող բավարարել մեր պահանջները։ Ամբողջ հարցն այն է, թե ինչ նպատակով են կատարվել հիշյալ հատվածների կրկնակի պարիսպները և ինչո՞ւ են դրանք համարվել քաղաքի առավել խոցելի մասերը։

Եթե ուշադիր նայենք քարտեզներին, ապա կնկատենք, որ Գառնի գետը ժամանակին հոսել է քաղաքի արևմտյան և հարավային պարիսպներին անմիջապես մոտ, և որ պարիսպների այդ հատվածներում գետը եղել է լրացուցիչ պատվար, թշնամական հարձակումները կանխելու համար։

Կարո Ղաֆադարյանը, ուսումնասիրելով Գառնի գետի հունի փոփոխությունների հարցը, իրավացի գտնում է, որ Դվինի միջնաբերդի և քաղաքի պարիսպների ջրային խրամատները սնվել են Ազատ (Գառնի) գետից, արհեստական հունով, որը սկսվել է Տիկնունի ամրոցի մոտերքից։ Նա դրանում է, որ գետը գոտկել է բերդը և հարավային ուղղությամբ դուրս է եկել քաղաքի սահմաններից Բզովան գյուղի մոտերքում[12]։ Այս համոզիչ եզրակացությունը արվել է երկարատև դիտարկումներից հետո, որը հաստատվել է մեր (արշավախմբի ճարտարապետ Կորյուն Ղաֆադարյանի մասնակցությամբ) տվյալներով, հետախուզելով Դվինի արևմտյան և հարավային տարածքները մինչև Գառնի գետի ժամանակակից հունը։ Նույն տվյալները ավելի քան ճշտվել են 1987 թ. քաղաքի արևմտյան կողմում արված հետախուզական պեղումների ընթացքում։

Ռուս ուսումնասիրողների համար Արարատյան դաշտի հուշարձանները մատչելի դարձան միայն 1828 թ. հետո, երբ Երևանի և Նախիջևանի խանությունները ընդգրկվեցին Ռուսական կայսրության կազմի մեջ[13]։ Հետաքրքրությունը Դվինի նկատմամբ մտավ նոր փուլ և նոր որակ ստացավ։ Դա կապված էր երկրամասում մշակութային կյանքի աշխուժացման և մասնավորապես պատմահնագիտական հուշարձանների նկատմամբ ունեցած վերաբերմունքի հետ, երբ ստեղծվում են մի շարք գիտական ընկերությունների մասնաճյուղեր, հետագայում՝ թանգարաններ։

11 Կ. Ղաֆադարյան. նշվ. աշխ., էջ 20—22։ В. М. Арутюнян. Градостроительство древней и средневековой Армении. Автореферат докт. диссерт., Ереван, 1964, с. 23—24.

12 Կ. Ղաֆադարյան. նշվ. աշխ., էջ 28։

13 Նույն տեղում, էջ 17։ Ա. Ա. Քալանթարյան. Դվին. Երևան, 1988, էջ 22—23։

Դվինում առաջին անգամ պեղումներ կատարվել են 1850 թ. Կովկասի փոխարքայի դիվանատան աստիճանավոր, ոմն Տոկարևի կողմից, որը փոխարքա Մ. Վորոնցովի կարգադրությամբ ճանապարհորդում էր Հայաստանում՝ նորաստեղծ Կովկասի թանգարանի համար նյութեր հավաքելու նպատակով։ Այդ փաստաթուղթը պահվում է Վրաստանի Կենտրոնական պատմական արխիվում և առաջին անգամ հրատարակվել է Լ. Մելիքսեթ-Բեկի կողմից[14]։ Տոկարևը Դվինը սխալմամբ համարում է Մոզը (միջնադարյան ավան), որի ավերակները գտնվում են Եղեգնաձորի շրջանի Մալիշկա գյուղի մոտ՝ Արփա գետի աջ ափին։ Նա Դվինը նույնացնում է Արտաշատի հետ։ Սակայն հետագայում Տոկարևը կասկածի տակ է վերցնում իր տեսակետը, քանի որ Արտաշատին վերագրվող տեղադրությունը չէր համապատասխանում հռոմեացի աշխարհագիր Ստրաբոնի նկարագրությանը։ Այցելելով Նոր Բայազետ և դիտելով Կարմիր վանքը (Կիզիլ վանքը, հավանաբար Ներքին Գետաշենի եկեղեցին), նա մեկնում է Դարալագյազ (Եղեգնաձոր), այնտեղից Նախիջևան անցնելու նպատակով։ «Близ сел. Моз нашел я развалины целого города, простирающиеся версты на два или три. Исторические сведения, сохранившиеся у древних и новых писателей, и народное предание согласующееся с ними и слышанного мною от одного сведующего армянина, мелника Кулашбара из сел. Акулисы, заставляют меня предполагать, что эти развалины принадлежат бывшей столице Армении после Артаксады—Товину, или Двину»[15].

Տոկարևը Նախիջևանից անցնում է Արդաշիր։ Նա գրում է. «Отсюда отправился я через Камарлю в сел. Ардашир, близ которого находятся развалины города, который будто бы и есть древняя Артаксада. Здесь я сделал небольшой опыт разрытия главного кургана (*խոսքը գնում է Դվինի միջնաբերդի մասին—Ա. Ք.*) и открыл остатки здания и в нем несколько вещиц, из которых к сожалению, ни одна не была сохранена в целости. Слышанное мною предание и тщательное обозрение местности заставляют меня сильно сомневаться, что будто бы здесь была Артаксада».[16]

Տոկարևի ներկայացրած զեկույցից երևում է, որ ինքը դեռևս ձևավորված կարծիք չունի Դվինի տեղադրության վերաբերյալ և առայժմ բաց է թողնում Դվինի և Արտաշատի տեղագրական հարցերը։ Հետաքրքիրն այն է, որ և՛ Մոզում, և՛ Արդաշիրում նա ծանոթացել է տեղի ավերակներին վերաբերող ավանդությունների հետ, որոնք ըստ երևույթին սերնդից սերունդ անցնելով, պահպանել են հետաքրքիր նյութեր։ Այս առումով, մեր կարծիքով, պետք է լուրջ պրպտումներ կատարվեն բանահյուսական տվյալներում։

Տոկարևի ներկայացրած գործի մեջ տեղ են գտել ցուցակներ Արտաշատում գտնված նյութերի՝ դրամներ (մեկ սասանյան և մեկ սելջուկյան)[17], հնագիտական նյութեր (22 անուն)[18] և ամենակարևորը՝ չափագրություններ՝ իր պեղած շինության վերաբերյալ և ավերակների հատակագիծը[19]։ Ըստ երևույթին այդ նյութերը XIX դ. 60-ական թթ. հանձնվել են Կովկասյան թանգարանին։ Հնարավոր է, որ ներկայումս դրանք պահվում են Վրաստանի պետական թանգարանի պահոցներում և արխիվային նյութերում։

---

[14] Л. М. Меликсет-Бек. Из истории археологических изысканий в Армении.— ՀԳԱ «Տեղեկագիր» (*հաս. գիտ.*), 1947, № 6, էջ 47—50։

[15] Центральный исторический архив Грузии. д. 243. л. 18 (*հետագայում՝* ЦИАГ).

[16] *Նույն տեղում գ. 243, թ. 19։*

[17] *Նույն տեղում, թ. 36։*

[18] *Նույն տեղում, թ. 37։*

[19] *Նույն տեղում, թ. 30.*

Ընդհանրապես Տոկարեի աշխատանքները Հայաստանում մեծ ծավալ են ունեցել և ընդգրկել են ընդարձակ տարածքներ։ Դա երևում է այն ցուցակից, որտեղ նշված են նրա այցելած բնակավայրերը, հուշարձանները և հեռավորությունները։ Այդ ցուցակի մեջ են մտնում Երևանը, Էջմիածինը, Ջեյվան, Ուշականը, Փարպին, Կարբին, Մողնին, Աշտարակը, Դարաչիչակը, Բաշ Աբարանը, Ալեքսանդրապոլը, Անին, Կողբը, Կարակալան, Խոր Վիրապը, Նորադուզը, Աղիամանը, Մարտիրոսը, Քեշիշքենդը, Նախիջևանը, Օրդուբադը, Վերին Ագուլիսը, Ջուլֆան, Արտաշիրը, Գեղարդը, Բաշ Գառնին[20]։ Տոկարևը գնդապետ Խոնկոյի գլխավորած խմբարշավի կազմում բարձրացել է Մեծ Արարատի գագաթը։

Դվինի վերաբերյալ Տոկարևի գրառումները որոշակի հետաքրքրություն են ներկայացնում քաղաքի ուսումնասիրության պատմության համար։ Հետաքրքիրն այն է, որ չնայած Լ. Մելիքսեթ-Բեկի կողմից նյութի հրապարակմանը, այս փաստաթղթին ծանոթ չեն եղել XIX դարի վերջում և XX-ի սկզբում Դվինում պրպտումներ կատարող մասնագետները, առավել ևս՝ հետագա ուսումնասիրողները։

1899 թ. Դվինում պեղումներ է կատարում Ն. Մառը։ Աշխատանքները թեև մեծածավալ էին՝ բանվորների լայն ընդգրկումով, իրականում սակայն պեղումները հետախուզական բնույթ էին կրում (տևել են օգոստոսի 17—22-ը)։ Պեղումների համառոտ հաշվետվությունից, որը հրապարակվել է 1902 թ.,[21] երևում է, որ Ն. Մառը աշխատել է միջնաբերդի արևմտյան պարսպի մոտ և բլրի գագաթին։ Մանրամասն նշված են արդյունքները և գտնված նյութերը և արվել են համապատասխան եզրակացություններ։

Դվինում Ն. Մառի կատարած աշխատանքներին վերստին անդրադարձել են Կարո Ղաֆադարյանը[22] և այլ հետազոտողներ։

Ս. Պետերբուրգում գտնվող Ռուսաստանի ԳԱ նյութական մշակույթի ինստիտուտի (նախկին ԽՍՀՄ ԳԱ հնագիտության ինստիտուտի բաժանմունք) արխիվում են պահվում Դվինի 1899 թ. պեղումների վերաբերյալ գծագրերը և տարբեր զեկուցագրեր՝ ուղղված Կայսերական հնագիտական հանձնաժողովին, Ն. Մառի օրագիրը[23]։ Հրատարակված հաշվետվությունը և արխիվում պահվող նյութերի համեմատությունը արդեն ցույց է տալիս, որ վերջինս բավականին լայն ինֆորմացիա է պարունակում, որը շատ արժեքավոր է Դվինի պատմության, ուսումնասիրության համար։

Պետք է ասել, որ օրագրից չի երևում և չի հաստատվում այն միտքը, թե Ն. Մառը կողմնորոշված չի եղել հուշարձանի անվան հարցում։ Իր օրագրի վերնագրում նա նշում է, որ ինքը որոշել է գնալ Դվին (ոչ թե գյուղ Դվին— Ա. Ք.)։ Նա իջևանում է Թոփրաղ-Կալա (թաթարական) և այնուհետև Արդաշիր (հայկական) գյուղերում։

Դժվար է ասել, թե ինչ նկատառումներից ելնելով նա որոշակիություն չի մտցրել այդ հաշվետվության մեջ, որ նկատվում է նաև 1900 թ. փետրվարի 24-ին Կայսերական հնագիտական հանձնաժողովին գրած զեկուցագրում։ Համենայն դեպս գտնված նյութերը և, հատկապես, դրամները չէին կարող Ն. Մառի մոտ ստեղծել այն պատրանքը, թե ինքը գործ ունի Արտաշատի հետ։

---

20 Նույն տեղում, թ. 26—29։

21 Отчет Императорской Археологической комиссии за 1899 г., СПб., 1902.

22 Կ. Ղաֆադարյան. Դվին քաղաքը և նրա պեղումները, 1, էջ 37—38։

23 Поездка Марра в 1899 г. в Двин для разведочных раскопок и дневник. Архив Института истории материальной культуры (ИИМК) в С. Петербурге. ф. № 1, 1899, архивный лист № 119, л. 28—41: Զեկուցագրերի մի մասը հրատարակվել է՝ Октября Балкян, Клавдия Пескарева. Докладные записки Н. Я. Марра о разведочной раскопке Двина в 1899 г.,—ՀԳԱ «Լրաբեր հասարակական գիտություններին», 1982, № 4։

Երկրորդ հարցը խմբարշավի մասնակիցների խնդիրն է։ Ն. Մառի օրագրից երևում է, որ նա իրեն օգնելու և բանվորներին հետևելու համար որպես օգնական վերցրել է Հր. Աճառյանին՝ «Молодой лингвист, получивший научное образование в Париже и заявивший себя сериею мелких любопытных заметок по кавказским языкам, напечатанных на французском и армянском языках. В Эчмиадзине он преподает турецкий язык в Академии для воспитанников турецко-поданных».[24]

Պեղումների ժամանակ Հր. Աճառյանը հետևել է պարսպի արտաքին երեսի պեղումների աշխատանքներին և ինքնուրույն հետազոտել է բլրի գագաթի արևելյան կողմում նշմարվող գաղտնուղու հետքերը։

Երիտասարդ հասակում մեծանուն լեզվաբանի կատարած հնագիտական աշխատանքը, մասնավորապես Ն. Մառի հետ Դվինի պեղումներին մասնակցությունը, շատ հետաքրքիր փաստ է։ Դրան շատ համառոտ անդրադարձել է Հր. Աճառյանը իր «Կյանքիս հուշերից» գրքում։ Մասնագիտական ոչ մի հրատարակության մեջ այս հարցը չի քննարկվել։ Հաղորդելով իր մասնակցության մասին պարսպի պեղումներին, Հր. Աճառյանը միաժամանակ նշում է. «Մեր դիմացն էր Դվինը, կես ժամ հեռավորության վրա, որը նույնպես ուզում էր պեղել Մառը»[25]։ Հր. Աճառյանը նույնպես կարծել է, թե պեղում են Արտաշատը։ Այս իմաստով չի հասկացվում, թե ինչի մասին է գնում խոսքը։

Հր. Աճառյանի հնագիտական գիտելիքների մասին է խոսում նրա իսկ ձեռքով կազմված Դվինի միջնաբերդի մանրամասն հանույթը (նկ. 1)։ Նույն օրագրում որպես հավելված կա այդ հատակագիծը, որի վրա գրված է. «План Крепости». Развалин древнего армянского города, по предположению, Двина или Арташата (ш-ն դարձնելով кс—Артаксата—А. К.), на месте составил Хр. Ачарян к разведочным раскопкам Н. Марра (1899 г.)»[26]

Սխեմատիկ կազմված հատակագիծը ունի աստիճանաչափ (մասշտաբ) և լրիվ ինֆորմացիա է տալիս պեղավայրերի տեղադրության, պարիսպների ուղղության, աշտարակների քանակի, պարսպի մեջ փորված ճանապարհների, անցումների մուտքի վերաբերյալ, որոնք ուղեկցվում են հայերեն և ռուսերեն լեզուներով[27] արված բացատրություններով։ Գծագրի վրա նույնիսկ նշված են բլրից տարբեր կողմերում հեռվում երևացող սարերը (Կարմիր կամ Աղի սար, Քեմերով սար, Երլան սար (Օձ լեռ), Քեշու սար (Այծի սար), Ղըզ-Ղալա (Տիկնունի—Ա. Ք.) և այլն)։ Հարավային մասում, առանց հեռավորության նշման, հիշատակված է Արտաշիրի բլուրը։ Չի հասկացվում, դա վերաբերում է Խոր Վիրապի բլրաշարքին, թե՞ ինչ-որ բարձունք է, որը գտնվել է Վ. Արտաշատ գյուղի տարածքում։

Հետաքրքիր է, որ Աճառյանն իր հուշերում հատուկ նշում է իր քարտեզագրական ունակությունների մասին. «Թեև նկարս և գիրս երևելի չէին, բայց շատ ընդունակ էին քարտեզ գծելու»[28]։

Ն. Մառի արխիվում պահպանված օրագրում, տպված հաշվետվությունում և հետագա բոլոր հրատարակություններում ներկայացված է հիշյալ գծագրի երկրորդ տարբերակը՝ արտագծած բնօրինակից ավելի վարժ ձեռ-

---

24 Архив ИИМК. ф. 1, 1899 г., л. 28.

25 Հր. Աճառյան. Կյանքիս հուշերից. Երևան, 1967, էջ 224։

26 Архив ИИМК, ф. I, 1899 г. Քարտեզ 33-րդ թերթին կից (օրագրի վերջին էջին)։

27 Հայերեն լեզվով բացատրությունները գրված են Հր. Աճառյանի ձեռքով, ռուսերենն ըստ երևույթին Ն. Մառն է ավելացրել, քանի որ Հր. Աճառյանը գրել է, որ ինքը չի տիրապետել այդ լեզվին։ Տե՛ս Կյանքիս հուշերից, էջ 226։

28 Նույն տեղում, էջ 35։

քով։ Նրա հեղինակ համարվել է Ն. Մառը։ Մեզ թվում է ներկայումս պետք է այլ գնահատական տրվի այդ խնդրին։

Դվինում Ն. Մառի կատարած կարճատև պեղումները բավարար չափով նյութեր են ընձեռել։ Հատկապես պետք է նշել դրամագիտական ձեռքբերումները և գեմմաները։ Մեզ որոշակի հայտնի չէ նյութերի պահպանման տեղը։ Սմբատ Տեր-Ավետիսյանի հաղորդմամբ նյութերը հանձնվել են պետական էրմիտաժին, իսկ ձեռք բերված 27 դրամները՝ Պետերբուրգի համալսարանին[29]։ Բացի այդ, տեղում պեղավայրերի ընտրությունը և բացված մանրամասները լրացուցիչ ինֆորմացիա են տալիս մի շարք հարցերի շուրջ, որոնք հետագայում առնչվել են մեր աշխատանքների հետ։



Նկ. 1

Այսպես. 1. Երբ 1946—1947 թթ. պեղվում էր կենտրոնական թաղամասի մուտքի հատվածը, բացվել են ճյուղավորված ջրամատակարարման խողովակաշարերը. ենթադրվում էր, որ խմելու ջուրը կենտրոնական թաղամաս մուտք է գործել միջնաբերդի կողմից, անցնելով ջրային խրամատի վրա գցված կամրջի տակով կամ այլ եղանակով։ Ն. Մառի օրագրից պարզվում է, որ պարսպի տակով անցել են ջրատար խողովակներ[30]։ Քանի որ կենտ-

[29] С. В. Тер-Аветисян. Двин, его история и раскопки в 1937—1939 гг. *(ձեռագիր)։ Հայաստանի պատմության պետական թանգարանի արխիվ, № 29, էջ 67։*

[30] Архив ИИМК, л. 31—32. *Ն. Մառը սխալվում է այդ խողովակաշարի թվագրության հարցում, համարելով այն XIV—XV դդ., ինչպես նշում է Կայսերական հնագիտական հանձնաժողովին ուղղված 1900 թ. փետրվարի 24-ի զեկուցագրում։ Իրականում այդ խողովակաշարը թվագրվում է VI—VII դդ.։*

բռնական թաղամասի ջրամատակարարումը հնարավոր էր միայն այդ ուղղությամբ, ուրեմն պետք է ենթադրել, որ խողովակաշարը մտել է միջնաբերդ հյուսիս-արևելյան հատվածից և անցնելով միջնաբերդի ստորին հարթ տարածքով, արևմտյան պատի տակից դուրս է եկել և ուղղվել դեպի կամուրջը։ Այստեղ, իհարկե, կարևոր է հաշվի առնել նաև մակարդակների տարբերությունը։

2. Բլրի գագաթը գոտկել է մ. թ. ա. III—I հազարամյակի ամրոցի պարիսպը կիկլոպյան շարվածքով, որը վաղ միջնադարում վերակառուցվելով օգտագործվել է։ Ըստ երևույթին բլրի գագաթում գազտնուղու մուտքի շրջանում Հր. Աճառյանի պեղումները անմիջապես այդ կիկլոպյան շարվածքի հարևանությամբ են եղել, քանի որ օրագրում նշված է շատ մեծ անտաշ քարերի առկայություն[31]։ Բլրի գագաթի արևելյան հատվածում (որտեղ մեր կողմից վերջին տարիներին բացվել է այդ պարսպապատի մի հատվածը) կա ընդհատում, որը հավանաբար պեղվել է 1899 թ.։

Ն. Մառը իր օրագրում խոսում է Դվինի եկեղեցու մասին, որը ամենայն հավանականությամբ Ս. Գրիգոր տաճարն է։ Նա գրում է. «Из разспросов оказывается, что в Топрах-Кала открыта церковь и там же нашли огромную плиту с надписями (она употреблена в постройку), а равно колонны, которые разбили. Ограбление городища продолжается».[32] Հնարավոր է, որ սյունները պատկանել են V, գուցե և VII դարի կաթողիկոսարաններին։

1907 և 1908 թթ. Դվինում պեղումներ է կատարում Խաչիկ վարդապետ Դադյանը, որոնց արդյունքները քիչ թե շատ լուսաբանված են[33]։

Ուսումնասիրողների ուշադրությունից դուրս են մնացել Դվինի տարածքում 1908 թ. աշնանը Բագրատ Խալաթյանի կատարած հետախուզական աշխատանքները։ Ռուսաստանի ԳԱ նյութական մշակույթի ինստիտուտի արխիվում պահպանվել է Բ. Խալաթյանի հաշվետվությունը 1908 թ. Կարսի և Երևանի նահանգներում կատարած պեղումների վերաբերյալ, որի մեջ ընդգրկված է նաև Դվինը[34]։ Նրա հաշվետվության մեջ կարևոր տեղ է հատկացվում հուշարձանի նկարագրությանը, որի Դվին լինելը կասկածի տակ չի առնվում։ Սկզբնապես որոշ պեղումներ կատարելով միջնաբերդից արևելք ընկած տարածքներում, Բ. Խալաթյանը դիտողություններ է անում հուշարձանի սահմանների վերաբերյալ, կոնկրետ նշելով նրա տեղադրությունը Թոփրաղ-Կալա, Բզովանդ (թաթարական), Արտաշատ, Վերին և Ներքին Քյուրդքենդ, Թափաբաշ, Դվին և Իպաքլու (հայկական) գյուղերի միջև. ի վերջո եզրակացությունն այն է, որ հուշարձանը հիմնականում տեղադրված է Թոփրաղ-Կալա գյուղի տարածքում և նրան հարող մերձակա շրջակայքում։ Օրագրում կա քաղաքի շատ պարզունակ հատակագիծը (նկ. 2)։

Բ. Խալաթյանը պեղումներ է կատարել բլրի հյուսիսային հատվածում, խրամատի վրա՝ ամրոցի դարպասները գտնելու ակնկալիքով։ Հետաքրքիր է այն փաստը, որ Դվինի միջնաբերդում գտնվող խրամատում ջուր է եղել. պեղավայրի տեղը մենք չկարողացանք ճշտել, չնայած թվում է, որ այն պետք է լինի հավանաբար հյուսիսային մեծ բուրգի շրջանում։ Պեղումների ժամանակ այնտեղ բացվել են գետաքարերից կառուցված լայն պատի հետքեր, որի մեջ նկատվել են երկու սրբատաշ մեծ քարեր, որը և ենթադրել է տալիս այդտեղ մուտքի առկայության մասին։ Սակայն հողի ամրությունը (ըստ երևույթին քանդել են կավաշերտ պարիսպը) հնարավորություն չի տվել ընդարձակել պեղումները, որոնք և դադարեցվել են։

---

31 Նույն տեղում, թ. 30։

32 Նույն տեղում, թ. 29։

33 «Արարատ» պաշտոնական ամսագիր Սբ. Էջմիածնի, Վաղարշապատ, 1907, էջ 520, 659—661, 1909, էջ 173—178։

34 Архив ИИМК в С. Петербурге, ф. 1, 1908, архивный лист № 117, л. 3—11.

Գտնված իրերի մեջ Բ. Խալաթյանը հատուկ շեշտում է աղյուսի մի կտոր, որի վրա նկատելի են եղել սեպագիր նշաններ։ Հետագայում դա հաստատվել է Գերմանիայում, մասնագետների կողմից։ Այս փաստը մեզ համար նորություն է, քանի որ Դվինի պեղումներից ուրարտական նյութեր դրեթե չեն հայտնաբերվել։ Ինչպես այդ աղյուսի, այնպես էլ մյուս նյութերի ճակատագիրը անհայտ է։ Գուցե դրանց մի մասը պահվում է Գերմանիայի որևէ թանգարանում, որտեղ այդ ժամանակ դասախոսություններ էր կարդում Բ. Խալաթյանը[35]։



Նկ. 2

Շատ հետաքրքիր է գաղտնուղու բացումը բլրի հարավային հատվածում։ Գաղտնուղին լցված էր քարերով և հողով, նկատվում էին պեղումների հետքեր[36]։ Բ. Խալաթյանը գրում է. «Для успешного исследования холма я счел нужным подняться еще выше, где представлялась возможность через известный сельчанам проход, на южной оконечности холма проникнуть во внутрь его. Проход этот был завален массой камня и земли; видно было, что здесь еще не очень давно произведены были рас-

35 Նույն արխիվում պահվում է Բ. Խալաթյանի կողմից 1912 թ. Ռուսական թանգարանի ազգագրության բաժնին նյութեր հանձնելու վերաբերյալ նամակագրությունը, որոնց մեջ Դվինից հիշատակված է ընդամենը 6 միավոր։ Տե՛ս նույն արխիվը, էջ 39—43։ Պրպտումներ այս ուղղությամբ մեր կողմից չեն կատարվել։

36 Սա Ն. Մառի ժամանակ պեղված նույն գաղտնուղու մոտերն է, որը նկատելի է երկու գծագրերի համադրությամբ։ Հետաքրքիրն այն է, որ Բ. Խալաթյանը անտեղյակ է Մառի կատարած աշխատանքներին, չնայած բացի հաշվետվության հրատարակումից, այն բավականին թարմ էր տեղի բնակչության հիշողության մեջ, որոնք կարող էին նրան հաղորդած լինել։ Իրականում այդ հատվածը բլրի գագաթի հարավ-արևելյան լանջին է (ինչպես վերևում ասացինք, ներկայումս տեղը նկատելի է)։

копки. В первый же день к вечеру 9 сент. нам удалось открыть отверстие прохода, который был засыпан на дне мягкой, как бы очищенной землей. Рабочие медленно подвигались вперед, работая ползком, при свете свечей...

В продолжении шести дней проход был очищен настолько, что можно было ползком пройти около 50-ти шагов, все в прямом направлении к центру холма, не подымаясь и не спускаясь».[37]

Աշխատանքներն ընդհատվում են փլուզման վտանգի պատճառով։ Այս հատվածում Բ. Խալաթյանի կատարած պեղումների տեղը երևում է բլրի հարավային մասում, որը ներկայումս վերածված է խորը խրամատի։ Այստեղ Բ. Խալաթյանը բացել է նաև մեծ քարերով ինչ-որ պատեր, որոնք անկասկած պարսպի ստորին շարքերին են պատկանել։[38]

Բ. Խալաթյանի եզրակացություններն այն են, որ այդ բլուրը Մովսես Խորենացու և Փավստոս Բուզանդի հիշատակած Դվինն է, որ այն եղել է քաղաքի միջնաբերդը։ Քաղաքի կենտրոնական հատվածները փռված են եղել բլրի շրջակայքում՝ Թուխրաղ-Կալա և Արտաշատ գյուղերի տարածքում։

Հիմնվելով սեպագրերով աղյուսի բեկորի գյուտի վրա, Բ. Խալաթյանը գտնում է, որ բլուրը ուրարտական ծագում ունի, ինչպես Արմավիրի բլուրը և Խոր Վիրապի բարձունքները։ Այս եզրակացությունը կապվում է Բ. Խալաթյանի գիտական հետաքրքրությունների շրջանակի հետ, քանի որ նրա պատմագիտական հետազոտությունների զգալի մասը կապված են եղել Ուրարտուի հետ։

Դվինի հնագիտական ուսումնասիրությունը, կապված միջնադարյան Հայաստանի սոցիալ-տնտեսական բազմակողմանի հարցերի քննության հետ, ավելի քան ծավալվեց խորհրդային իշխանության տարիներին, երբ 1937 թ. սկսվեցին հուշարձանի գիտական պեղումները։ Հուշարձանի ուսումնասիրության պատմության մեջ դեռևս կան մութ կետեր, որոնք կլրացվեն հետագա արխիվային պրպտումների միջոցով։

ИЗ ИСТОРИИ ИЗУЧЕНИЯ ДВИНА

Доктор ист. наук А. А. КАЛАНТАРЯН

Резюме

Упоминания о развалинах Двина, полностью разрушенного татаро-монголами в XIII в. появляются в трудах армянских, русских и европейских путешественников начиная с XVIII в. В 1850 г. Токарев впервые произвел в Двине разведочные раскопки. Интересные материалы — вся документация и подробный очет Н. Марра о раскопках Двина в 1899 г., хранятся в архиве Института материальной культуры АН РФ. Отчет Н. Марра частично был опубликован в Отчетах ИАК в 1902 г. В статье показаны новые факты и подробности о памятнике, раскопках, а также об участии в экспедиции Гр. Ачаряна. В этом же архиве хранится отчет Баграта Халатяна о раскопках, произведенных в Армении и, частично, в Двине в 1908 г. Эти материалы публикуются впервые.

---

37 Архив ИИМК, ф. 1, 1908, л. 9—10:

38 *Ե՛վ Ն. Մառի, և՛ Բ. Խալաթյանի պեղումները վերստին ապացուցում են, որ բլրի գագաթը շրջապատված է եղել պարսպով, որի տակից եղել է գաղտնուղի։ Այդ գաղտնուղին հավանաբար հին է և գոյատևել է մինչև մ. թ. IV—V դդ., երբ կառուցվում է միջնաբերդի ստորին մասով անցնող պարիսպների երկրորդ շարքը։*